ՇԱՔՐՈ ԽՈՒԴՈՅԻ ՄԿՈՅԱՆ
(ծննդյան 70-ամյակի առթիվ)

Լրացավ ճանաչված քրդագետ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս Շ. Խ. Մհոյանի ծննդյան 70-ամյակը:

Շ. Խ. Մհոյանը ծնվել է 1930 թվականի ապրիլի 12-ին Արագածի շրջանի Ալագյազ գյուղում, ծառայողի ընտանիքում: Միջնակարգ կրթությունը ծննդավայրում ստանալուց հետո նա 1948թ. ընդունվում է 1 952թ. հաջողությամբ ավարտում է Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը: Շուրջ երեք տարի հայրենի դպրոցում որպես ուսուցիչ աշխատելուց հետո, 1955 թվականին նա հրավիրվում է աշխատելու քրդալեզու «Ռյա թազա» թերթի խմբագրությունում՝ սկզբում որպես բաժնի վարիչ, իսկ մեկ տարի անց՝ որպես խմբագրի տեղակալ:

1960 թ. նա անցնում է աշխատանքի Հայկական ԽՍՀ ԳԱ Արևելագիտության սեկտորում՝ որպես կրտսեր գիտաշխատող և սկսում է ուսումնասիրել քուրդ ժողովրդի նորագույն պատմության մի շարք առանցքային խնդիրներ: 1963 թ. Շ. Մհոյանը պաշտպանում է թեկնածուական դիսերտացիա՝ «Քրդական ազգային-ազատագրական շարժումը Իրաքում Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո» թեմայով, իսկ 1978 թ. Մոսկվայի Արևելագիտության ինստիտուտում՝ դոկտորականը՝ «Քրդական ինքնավարության հիմնահարցը Իրաքյան Հանրապետությունում» թեմայով:

1967 թ. նա ավագ գիտաշխատող է, 1985-ից՝ պրոֆեսոր: 1990 թ. փետրվարին Շ. Մհոյանը ընտրվել է Հայաստանի ԳԱԱ թղթակից-անդամ, 1996 թ. մարտին՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս: Երկար տարիներ՝ 1981-1995 թվականներին Շ. Մհոյանը ղեկավարել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի քրդագիտության բաժինը:

Զգալի է Շաքրո Մհոյանի ավանդը քրդագիտության, մասնավորապես քուրդ ժողովրդի նորագույն պատմության ուսումնասիրության բնագավառում: Նրա գրչին են պատկանում շուրջ 100 գիտական աշխատություններ, այդ թվում՝ 8 մենագրություններ: Շ. Մհոյանի աշխատություններ-

ը ոչ միայն բարձր են գնահատվել Հայաստանի և Խորհրդային Միության, իսկ հետագայում նաև Ռուսաստանի գիտական շրջանակների կողմից, այլ ուշադրության են արժանացել արևմտյան և արևելյան շատ երկրներում. պատահական չէ, որ նրանցից մի քանիսը թարգմանվել են թուրքերեն, անգլերեն, արաբերեն, պարսկերեն լեզուներով: Նա ակտիվ մասնակցություն է ունեցել նաև քրդագիտության հարցերին նվիրված միջազգային կարևոր գիտաժողովներին (Վաշինգտոն, Փարիզ, Ստոկհոլմ, Բեռլին):

Շ. Մհոյանը ծավալել է նշանակալի գիտակազմակերպչական գործունեություն: Նա Հայաստանի Արևելագիտության ինստիտուտի հիմնադիրներից և նրա կառուցվածքի ու գիտական ուղղությունների մշակման ակտիվ մասնակիցներից է: Ինստիտուտի քրդագիտության բաժինը նրա ղեկավարության ներքո վերածվեց կարևոր գիտական կենտրոնի, որի հետազոտությունները լայն ճանաչում ստացան Խորհրդային Միությունում և նրա սահմաններից դուրս:

Ակադ. Շ. Մհոյանը գործուն մասնակցություն է ունեցել նաև Խորհրդային Միության այլ քրդագիտական կենտրոնների աշխատանքների կազմակերպման մեջ: Մասնավորապես, հայաստանցի մասնագետը անուրանալի ավանդ ունի ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտուտում քրդագիտական հետազոտություններին նոր որակ հաղորդելու գործում: Այս ուղղությամբ նրա ներդրած ջանքերի կարևոր արդյունքներից է 1987 թ. Մոսկվայում լույս տեսած «Քրդական շարժումը նոր և նորագույն ժամանակաշրջանում» կոլեկտիվ մենագրությունը, որի հեղինակներից և խմբագիրներից է նա, ինչպես նաև նմանատիպ բնույթի, դարձյալ Մոսկվայում լույս տեսած «Քրդական հիմնահարցը ժամանակակից փուլում» խորագիրը կրող աշխատությունը:

Գիտական և գիտակազմակերպչական բեղմնավոր գործունեությունը ակադ. Մհոյանը համատեղել է երկարամյա դասախոսական աշխատանքի հետ: Նա 18 տարի դասավանդել է Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետում, ավանդելով պատմագիտական մի շարք առարկաներ: Նա առաջինն էր, որ մշակեց «Քուրդ ժողովրդի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» դասընթացը՝ համալսարանական ուսանողության համար:

Անցնելով Շ. Մհոյանի գիտական վաստակի բնութագրմանը՝ անհրաժեշտ է նշել, որ գիտական հասարակայնությանը նա հայտնի դարձավ առաջին հերթին Իրաքում քրդական հարցին նվիրված իր ուշագրավ հրապարակումներով, որոնցում արտացոլված է Իրաքում քրդական հիմնահարցի ամբողջական պատմությունը՝ 1918 թվականից մինչև մեր օրերը: 1990 թ. Մոսկվայում լույս տեսած նրա «Քրդական ազգային հարցը Իրաքում նորագույն ժամանակաշրջանում» խորագիրը կրող ստվարածավալ մենագրությունում ի մի են բերված սույն թեմայով նրա՝ երկար տարիների ընթացքում կատարած պրպտումների արդյունքները: Այդ աշխատությունը հիմնահարցի առաջին ակադեմիական ամբողջական մշակումն է մեզանում և արտասահմանում: Այստեղ հանգամանորեն ցույց են տրված պրոբլեմի զարգացման պատմական փուլերը, շարժիչ ուժերի տեղաբաշխումը, ներքին և արտաքին գործոնների դերը. առանձնահատուկ տեղ է հատկացված արդի փուլի հիմնավոր և բազմակողմանի բնութագրմանը և զարգացման միտումների բացահայտմանը: Այդ մենագրությունը բարձր գնահատականի արժանացավ մասնագետների կողմից և մեկ անգամ ևս

փաստեց, որ Շ. Սհոյանը Իրաքում քրդական հարցի առանձնահատկությունների լավագույն գիտակներից է:

Ակադեմիկոս Շ. Սհոյանի գիտական հետաքրքրությունների շրջանակում առանձնահատուկ տեղ է գրավում քուրդ ժողովրդի պատմական ճակատագրում, մասնավորապես քրդական ազատագրական շարժման մեջ իսլամական գործոնի համակողմանի ուսումնասիրումը: Մանրակրկիտ հետազոտելով ու համադրելով բազմաթիվ փաստեր՝ նա իր մի շարք աշխատություններում ձևակերպել է այդ գործոնի արգելակիչ, բացասական դերի վերաբերյալ ուշագրավ թեզը: Նրան հաջողվել է բացահայտել իսլամի գործոնի վրա խարսխված մի յուրատեսակ մեխանիզմ, երբ մահմեդականությունը միաժամանակ երկու հակասական դեր է կատարում. մի կողմից, կառավարող ազգի (ժողովրդի) համար դյուրին դարձնելով նրա տիրապետությունը հպատակ մահմեդական ժողովրդի նկատմամբ, մյուս կողմից, «օրինական» տեսք տալով հպատակ ժողովրդի՝ տվյալ դեպքում քրդերի ենթակայությանը տիրապետող ժողովրդին:

Շ. Սհոյանի աշխատություններում առաջին անգամ պատմագրության մեջ մշակված են արդի փուլում քրդական ազգային շարժման գաղափարախոսության հիմնահարցերը: Մասնավորապես, նա հատուկ ուշադրություն է հատկացրել առանձին գաղափարաքաղաքական հոսանքների հիմնավոր հետազոտմանը: Քրդական ազգային կուսակցությունների և կազմակերպությունների ծրագրային և այլ փաստաթղթերի վերլուծության հիման վրա նա ցույց է տվել քրդական շարժման քաղաքական ուղղվածության պայմանավորվածությունը ներքին և արտաքին գործոններով, որոնք շատ հաճախ ունեն յուրօրինակ բնույթ և որոնց ուսումնասիրությունը պահանջում է ոչ ստանդարտ մոտեցումներ: Մասնավորապես, փաստված է այն հիմնադրույթը, ըստ որի, քրդական հարցի լուծումները հնարավոր են ոչ այլ կերպ, քան փուլ առ վտլ: Այդ առնչությամբ որպես ժամանակավրեպ, կաշկանդող ու վտանգավոր են գնահատվում ձախ էքստրեմիստական ուղղությունները:

Դարաբաղյան շարժման տարիներին ակադ. Շ. Սհոյանը դրսևորեց ազնիվ գիտնականին հատուկ հասարակական կեցվածք՝ պաշտպանելով հայ ժողովրդի դարաբաղյան հատվածի պայքարի խորապես արդարացի բնույթը: Այդ տարիներին նրա գիտական հետաքրքրությունների շրջանակը ընդլայնվեց՝ իր մեջ ներառնելով Խորհրդային Ադրբեջանում քրդահալած քաղաքականության առանձին դրսևորումների ուսումնասիրությունը: Այս ուղղությամբ նրա կատարած աշխատանքի ուշագրավ արդյունքներից էին Ադրբեջանում «Քրդական գավառի» («Կարմիր Քուրդիստան») պատմական ճակատագրին վերաբերող գիտական հրապարակումները (տե՛ս, օրինակ, "Вопросы истории", 1989, N 5), ինչպես նաև՝ բազմաթիվ ելույթները գիտական համաժողովներում ու գիտագործնական քննարկումներում՝ մեզանում և Խորհրդ. Միության այլ քաղաքներում: Կարելի է հիշատակել, մասնավորապես, Շ. Սհոյանի ելույթը 1989 թվականին Մոսկվայում («Վոպրոսի իստորիի» ամսագրի խմբագրության կողմից կազմակերպված «կլոր սեղան»), որտեղ նա, բերելով մի շարք վիճակագրական տվյալներ, ցույց տվեց, որ Ադրբեջանում տասնամյակներ շարունակ քրդերի նկատմամբ անց է կացվել ազգային ճնշման և ուծացման քաղաքականություն:

Ընտանեկան հանգամանքների բերումով ակադ. Շ. Սհոյանը մի քանի տարի առաջ ժամանակավորապես տեղափոխվեց Մոսկվա: Այնտեղ

նա շարունակում է իր ժրաջան գիտական ու գիտակազմակերպչական գործունեությունը քրդագիտության բնագավառում: Ընտրվելով Քրդագիտական ուսումնասիրությունների կենտրոնի առաջին տնօրեն՝ Շ. Միոյանը կարողացել է շատ արագ այդ նորաստեղծ գիտական օջախի շուրջ համախմբել Ռուսաստանի առաջատար քրդագետներին և ձեռնամուխ լինել մի շարք գիտական ու քաղաքական այժմեականություն ունեցող խնդիրների հետազոտմանը: Նորաստեղծ Կենտրոնը հինգ տարվա ընթացքում արդեն իսկ հրատարակել է քրդագիտական խնդիրների լայն սպեկտրը ընդգրկող 10 անուն գիրք, այդ թվում՝ «Հարավային Քուրդիստանն այսօր», «Քրդերենի գորանի բարբառը», «Քրդերենի զազա բարբառը», «Քրդերեն լեզվի պատմաբարբառագիտական քերականությունը» և այլն:

Քրդագիտության մեջ նշանակալի երևույթ դարձավ վերջերս Մոսկվայում լույս տեսած «Քուրդիստանի պատմությունը» կոլեկտիվ մենագրությունը, որտեղ առաջին անգամ քրդագիտության մարզում փորձ է արվել շարադրել քուրդ ժողովրդի ամբողջական պատմությունը, սահմանել նրա ժամանակագրությունը, պատմական զարգացման փուլերը: Ակադեմիկոս Միոյանը սույն ուշագրավ հետազոտության զգալի մասի համահեղինակն է և նրա խմբագիրներից մեկը:

Բնակվելով Մոսկվայում՝ Շ. Խ. Միոյանը չի կտրել իր կապերը Հայաստանից և հայ ժողովրդից: Նա հաճախակի լինում է Հայաստանում, ուշադրությամբ հետևում է նրա գիտական կյանքին: Վաստակաշատ գիտնականն իր ակտիվ մասնակցությունն է բերում նաև Մոսկվայի հայ համայնքի գործունեությանը, նրա կազմակերպության մի քանի կոմիտեների և Ծատուր Աղայանի անվան ֆոնդի հայագիտական ուսումնասիրությունների գիտխորհրդի անդամ է: Հայոց Մեծ Եղեռնի 85-ամյակին նվիրված՝ Մոսկվայում տեղի ունեցած միջազգային գիտաժողովում նա հանդես է եկել «Ցեղասպանության քաղաքականության շարունակական բնույթը» ուշագրավ զեկուցումով, որը հետագայում լույս է տեսել ռուսերեն և անգլերեն լեզուներով:

Ակադեմիկոս Շաքրո Միոյանը այսօր էլ լի է նոր մտահաղացումներով և հետաքրքիր գիտական պլաններով: Մաղթենք նրան քաջառողջություն, երկար կյանք և ծրագրերի իրականացում:

Ռ. Ա. ՍԱՖՐԱՍՏՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու